

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1) Երկրների, տարածաշրջանների բնությունն ու հասարակությունն իրենց բաղադրիչներով համալիր ուսումնասիրում է.


- 1) երկրաձևաբանությունը
- 2) երկրագրությունը
- 3) երկրաբնապահպանությունը
- 4) երկրաբանությունը

2) Կողմնորոշված կողմնացույցի մագնիսական սլաքը հորիզոնի ո՞ր կողմն է ցույց տալիս.

- 1) հյուսիսային
- 2) արևելյան
- 3) հարավային
- 4) արևմտյան

3) Նկար 1.- ում Ջ տառով նշված կետի աշխարհագրական կոորդինատները որո՞նք են:

- 1) հվ. լ. 20° արմ. է. 20°
- 2) հս. լ. 20° արլ. է. 20°
- 3) հվ. լ. 20° արլ. է. 20°
- 4) հս. լ. 20° արմ. է. 20°



4) Երկրի օրական պտույտի հետևանք է.

- 1) ժամերի տարբերությունը
- 2) երկնքի ամպամածությունը
- 3) պասսատների առաջացումը
- 4) մուսսոնների առաջացումը

5

Եթե տեղագրական քարտեզում հորիզոնականները խիտ դասավորություն ունեն, ապա այդ տեղամասում.

- 1) լեռնալանջը զառիթափ է
- 2) լեռնալանջը բուսագուրկ է
- 3) լեռնալանջը բացակայում է
- 4) լեռնալանջը մեղմաթեք է

6

1 : 7 000 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 8 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 560 կմ
- 2) 5600 կմ
- 3) 5,6 կմ
- 4) 56 կմ

7

Բնութագրումով որոշել Երկրի շերտը.

*Երկրի ամենավերին և ամենաբարակ շերտն է: Այն կազմված է համեմատաբար թեթև ապարներից: Այդ շերտն է.*

- 1) երկրակեղևը
- 2) վերին միջնապատյանը
- 3) Երկրի միջուկը
- 4) ստորին միջնապատյանը

8

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրի ընդերքում այն տեղը, որտեղ առաջանում են ապարաշերտերի կտրուկ տեղաշարժեր, կոչվում է երկրաշարժի օջախ:
- 2) Գեյզերների տաք ջրերը մարդիկ օգտագործում են ջերմոցները և բնակարանները տաքացնելու համար:
- 3) Հանգած հրաբուխներ են Վեգուվը և Կրակատաուն:
- 4) Շատ գեյզերներ կան Կամչատկա թերակղզում:

9

Ի՞նչ գազ է արտազատվում լուսասինթեզի ժամանակ.

- 1) ազոտ
- 2) օզոն
- 3) ածխաթթու գազ
- 4) թթվածին

10

Ո՞ր գոնայում են ապրում փիղը և ընձուղտը.

- 1) տափաստան
- 2) խառը անտառ
- 3) անապատ
- 4) սավաննա

11 Գետի անկումը 800 մ է, երկարությունը՝ 200 կմ: Որքա՞ն է գետի միջին թեքությունը.

- 1) 6 մ/կմ
- 2) 8 մ/կմ
- 3) 2 մ/կմ
- 4) 4 մ/կմ

12 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Սառցադաշտային սնում ունեցող գետերը հորդանում են աշնանը:
- 2) Միջերկրածովյան կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 3) Մուսսոնային կլիմա ունեցող վայրերում գետերը հորդանում են ձմռանը:
- 4) Հասարակածային գոտու գետերը հորդանում են ամռանը:

13 Բնութագրումով որոշել բնական զոնան.

*Այս բնական զոնան տարածվում է մեծամասամբ հյուսիսային կիսագնդում և ընդգրկում է Հյուսիսային Ամերիկայի և Եվրասիայի հյուսիսային շրջաններն ու նրանց հարող կղզիները: Կլիման մերձարկտիկական է: Ծառեր գրեթե չեն աճում, և տարածված են մամուռներն ու քարաքոսներ: Ո՞ր բնական զոնան է.*

- 1) տունդրա
- 2) տայգա
- 3) սառցային
- 4) սավաննա

14 Տափաստանների բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում.

- 1) դարչնագույն
- 2) կարմրադեղին
- 3) սևահողերի
- 4) կարմրագորշ

15 Ո՞ր լեռն է ամենաբարձրը Անտարկտիդայում.

- 1) Էրեբուս
- 2) Վինսոն
- 3) Մոնբլան
- 4) Էլբրուս

16 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ավստրալիայի ներքին շրջաններում տեղումներն առատ են:
- 2) Ավստրալիայում սառցադաշտեր չկան:
- 3) Մեծ ջրբաժան լեռնաշղթան ունի հրաբխային ծագում:
- 4) Մուրեյ գետը սկիզբ է առնում Էյր լճից:

17

**Հարավային Ամերիկայի արևմտյան ափով ո՞ր ծովային հոսանքն է անցնում:**

- 1) Բրազիլական
- 2) Ֆոլկլենդյան
- 3) Պերուական
- 4) Գվիանական

18

**Ընտրել Հարավային Ամերիկայի հարթավայրերի և դրանց բնութագրիչների համապատասխանությունների ճիշտ շարքը.**

- |               |   |
|---------------|---|
| ա. Պատագոնիա  | 1. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի արևելք, առավելապես տարածվում են խոնավ հասարակածային անտառներ:                    |
| բ. Բրազիլական | 2. Մարահարթ է, կիսաանապատ, տարածվում է բարեխառն գոտում:   |
| գ. Լա Պլատայի | 3. Ընդարձակ հարթավայր է, կան պլատֆորմի կարծր բյուրեղային հիմքի մերկացած տեղամասեր՝ վահաններ, տարածվում են սավաննաներ՝ կամպոս: |
| դ. Ամազոնի    | 4. Տափարակ հարթավայր է, ունի թեքություն դեպի հարավ, նրա միջով է հոսում Պարանա գետը:   |

- 1) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 2) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-2, բ-3, գ-1, դ-4
- 4) ա-3, բ-1, գ-2, դ-4

19

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Հյուսիսային Ամերիկան Հարավային Ամերիկային միանում է Պանամայի պարանոցով:
- 2) Հյուսիսային Ամերիկան Եվրասիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:
- 3) Հյուսիսային Ամերիկան ամբողջությամբ արևմտյան կիսագնդում է:
- 4) Հյուսիսային Ամերիկայի փոքր մասը հարավային կիսագնդում է:

20

**Ո՞ր գույգն է սխալ.**

- 1) Այասկա թերակղզի — Այասկայի ծոց
- 2) Ֆլորիդա թերակղզի — Ֆլորիդայի նեղուց
- 3) Լաբրադոր թերակղզի — Լաբրադորի նեղուց
- 4) Կալիֆոռնիա թերակղզի — Կալիֆոռնիական ծոց

21

**Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ:**

- 1) Աֆրիկայի մակերևույթում տիրապետում են սարահարթերը:
- 2) Աֆրիկայում ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հասարակածային գոտում:
- 3) Կապի և Դրակոնյան լեռները հին, քայքայված լեռներ են:
- 4) Աֆրիկայի հիմքում ընկած է Գոնդվանա հնագույն խոշոր ցամաքի մասը կազմող Աֆրիկական պլատֆորմը:

22

**Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման 4 մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
- 2) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 3) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
- 4) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:

23

**Եվրասիայի կլիմայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Տարածքի մեծ մասի կլիման ձևավորվել է բարեխառն օդային զանգվածների ազդեցությամբ:
- 2) Մայրցամաքի հյուսիսն ամբողջ տարին անտարկտիկական ցուրտ և չոր օդային զանգվածների ազդեցության տակ է:
- 3) Մայրցամաքը տարածվում է հյուսիսային կիսագնդի բոլոր կլիմայական գոտիներում:
- 4) Տարածքում ձևավորվում են օդային զանգվածների բոլոր չորս հիմնական տիպերը:

24


**Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի առաջին փուլի կարևոր իրադարձություն չէ.**

- 1) ԱՄՆ–ի կազմավորումը
- 2) Օսմանյան կայսրության փլուզումը
- 3) ԽՍՀՄ–ի կազմավորումը
- 4) Ավստրո–Հունգարիայի փլուզումը

25

**Դիագրամում տրված է երկրագնդի բնակչության բաշխումն ըստ բարձրության գոտիների: Ո՞ր բարձրության գոտուն է համապատասխանում Ա տառը.**

- 1) 500-1000 մ
- 2) 1000-2000 մ
- 3) մինչև 200 մ
- 4) 200-500 մ



26

**Պետության բնակչության թիվը 200 մլն մարդ է, գյուղական բնակչության թիվը՝ 50 մլն: Ուրբանիզացման մակարդակը կլինի.**

- 1) 40%
- 2) 25%
- 3) 75%
- 4) 50%

27

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) ՀՏ-ն մինչև 19-րդ դարի վերջը ուներ միակենտրոն բնույթ, այժմ բազմակենտրոն է:
- 2) ՀՏ-ի զարգացման փուլերից է արդյունաբերականը:
- 3) Համաշխարհային տնտեսությունն (ՀՏ) աշխարհի բոլոր երկրների ազգային տնտեսությունների փոխկապակցված ամբողջությունն է:
- 4) ՀՏ-ի տարածքային միավորները վերազգային ընկերություններն են:

28


**Համաշխարհային տնտեսության ճյուղերից ո՞րն է առաջատար աշխատողների թվով.**

- 1) գյուղատնտեսությունը
- 2) տեղեկատվական ոլորտը
- 3) արդյունաբերությունը
- 4) ծառայությունների ոլորտը

29

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Թեթև և սննդի արդյունաբերությունը հիմնականում թողարկում է սպառման արտադրանք:
- 2) Թեթև և սննդի արդյունաբերությունը տնտեսության նորագույն ճյուղերն են:
- 3) Համաշխարհային թեթև և սննդի արդյունաբերության հիմնական հումքային բազան գյուղատնտեսությունն է:
- 4) Թեթև և սննդի արդյունաբերության տեղաբաշխումը համատարած է, քանի որ բոլոր երկրներում էլ կա:



*քարտեզ 1*

30 Ո՞ր պետությունն է քարտեզ 1-ում նշված Ա տառով.

- 1) Չադ
- 2) Լիբիա
- 3) ՀԱՀ
- 4) Քենիա

31 Ո՞ր մայրաքաղաքն է քարտեզ 1-ում նշված B տառով.

- 1) Անտանանարիվու
- 2) Ռաբաթ
- 3) Ադիս Աբեբա
- 4) Կահիրե



32

**Կենտրոնական Ասիա տարածաշրջանի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Բարձր է բնակչության միջին խտությունը:
- 2) Գերիշխող կրոն է մահմեդականությունը:
- 3) Բոլոր երկրները չունեն ելք դեպի ծով:
- 4) Բնակչության մեծ մասը խոսում է թյուրքական լեզվախմբի մեջ մտնող լեզուներով:

33

**Հարավարևմտյան Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Երկրների մեծ մասի բնակչության կազմում գերակշռում են կանաչը:
- 2) Բարձր է բնակչության բնական աճը:
- 3) Տարածաշրջանի մեջ են մտնում Արաբական և Հինդուստան թերակղզիները:
- 4) Այստեղ են առաջացել քրիստոնեություն և բուդդայականություն կրոնները:

34

**Ո՞ր մշակաբույսի աճեցմամբ է Իտալիան աշխարհում առաջատար.**

- 1) խաղողի
- 2) ցորենի
- 3) կակաոյի
- 4) սուրճի

35

**Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում չեն.**

- 1) Կուբան և Ուրուգվայը
- 2) Արգենտինան և Չիլին
- 3) Կոլումբիան և Պերուն
- 4) Կանադան և Շվեդիան

36

**Ավստրալիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Երկրում մշակվող գլխավոր հացահատիկային մշակաբույսը ցորենն է:
- 2) Բնակչությունը հիմնականում կենտրոնացած է հարավարևմտյան շրջաններում:
- 3) Գառան մսի արտադրությամբ աշխարհում առաջինն է:
- 4) Աշխարհում առաջատարներից է այլումինի հումքի՝ բոքսիտների արդյունահանմամբ և արտահանմամբ:

37

**«Օգտակար հանածո — հանքավայր» զույգերիցընտրել սխալը.**

- 1) գազ — Հյուսիսային ծով
- 2) երկաթ — Պարսից ծոց
- 3) քարածուխ — Ռուրի ավազան
- 4) պղինձ — Անդերի լեռներ

38

**Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ ռ ր պնդումն է ճիշտ.**

- 1) Ըստ պետական կարգի՝ նախագահական հանրապետություն է:
- 2) Երկրի տարածքում բնակվող մեծաթիվ ժողովուրդներից են չուվաշները:
- 3) «Ժողովրդագրական պայթյունը» կանխելու նպատակով երկիրը վարում է բնակչության աճի կրճատման ժողովրդագրական քաղաքականություն:
- 4) Բնակչության թվաքանակով աշխարհի երրորդ պետությունն է Չինաստանից և Հնդկաստանից հետո:

39

**Հյուսիսային Եվրոպա տարածաշրջանի վերաբերյալ ռ ր պնդումն է սխալ.**

- 1) Բոլոր երկրներն ունեն ելք դեպի Համաշխարհային օվկիանոս:
- 2) Տարաբնակեցման ցանցում գերակշռում են քաղաքային բնակավայրերը:
- 3) Հարուստ է սառցադաշտային ծագման լճերով:
- 4) Աչքի է ընկնում բնակչության բարձր բնական աճով:

40

**Բնութագրումով որոշել պետությունը.**

*Եվրոպական այս պետության անունը թարգմանաբար նշանակում է սառցե երկիր: Սակայն այն բացառիկ հարուստ է գեյզերներով: Երկրաջերմային էներգիան լայնորեն կիրառվում է բնակարանների և ջերմոցների ջեռուցման համար: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Իսլանդիան
- 2) Նորվեգիան
- 3) Իռլանդիան
- 4) Ֆինլանդիան

41


**Հայկական պար լեռնաշղթայի վրա է.**

- 1) Կապուտան լիճը
- 2) Պարզ լիճը
- 3) Գայլատու լիճը
- 4) Քարի լիճը

42

Ո՞ր լեռնաշղթան ՀՀ հարավում չէ:

- 1) Վիրահայոց
- 2) Մեղրու
- 3) Զանգեզուրի
- 4) Վայքի



քարտեզ 2

43

Քարտեզ 2-ում Ծաղկունյաց լեռնաշղթան ո՞ր տառով է նշված.

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ

44

Քարտեզ 2-ում Սպանդարյանի ջրային էլեկտրակայանը ո՞ր տառով է նշված.

- 1) Է
- 2) Ը
- 3) Զ
- 4) Ե

**45** Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Մեծամորը և Ծաղկաձորը միագործառության քաղաքներ են:
- 2) Գյումրի և Վանաձոր քաղաքները վարչական, գիտակրթական ու մշակութային կենտրոններ են, արդյունաբերական, երկաթուղային ու ավտոխճուղային ճանապարհների հանգույց:
- 3) Արտաշատ և Արմավիր քաղաքները ցեմենտի արտադրության կենտրոններ են:
- 4) Քաջարան և Ախթալա քաղաքները զարգացել են իրենց մոտակայքում գտնվող հանքային հարստությունների առկայության և շահագործման շնորհիվ:

**46** ՀՀ ո՞ր բնակավայրը առողջարանային չէ.

- 1) Դիլիջանը
- 2) Արզնին
- 3) Հանքավանը
- 4) Ագարակը

**47** Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ամենամեծը տրանսպորտի և կապի բաժինն է:
- 2) ՀՀ-ն անցումային տնտեսություն ունեցող երկիր է:
- 3) ՀՀ տնտեսությունը մեծապես կախված է ներմուծվող էներգակիրներից:
- 4) ՀՀ տնտեսությունն ունի բազմաճյուղային կառուցվածք:

**48** Երկաթուղային կայարաններ են.

- 1) Գավառը և Մարտունին
- 2) Վայքը և Եղեգնաձորը
- 3) Գորիսը և Սիսիանը
- 4) Մարալիկը և Արթիկը

**49** Վայոց ձորի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասն արոտավայրեր են:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են թռչնաբուծությունը և խոզաբուծությունը:
- 3) Ցածրադիր գոտու ոռոգելի հողերում տարածված է խաղողագործությունը և պտղաբուծությունը:
- 4) Մարզի զարգացման գործում մեծ դեր ունի առողջարանային տնտեսությունը:

**50** Լոռու մարզում արդյունաբերության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ.

- 1) քիմիական արդյունաբերությունը
- 2) պանրի արտադրությունը
- 3) գինու-կոնյակի արտադրությունը
- 4) պղնձաձուլությունը

**51 Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Օգոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 2) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 3) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:
- 4) Ջերմոցային էֆեկտի ազդեցության մեծացումը պայմանավորված է մթնոլորտում մեթանի և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:

**52 Էլեկտրակայանների տեսակներից ո՞րն է ամենաշատն աղտոտում մթնոլորտը.**

- 1) հողմային
- 2) արևային
- 3) ջրային
- 4) ջերմային

**53 Ընդերքի ռեսուրսների որոշ տեսակներ խնայելու արդյունավետ միջոցառում է.**

- 1) մետաղների փոխարինումը սինթետիկ նյութերով
- 2) փակ եղանակով արդյունահանման փոխարինումը բաց եղանակով
- 3) անընդհատ նոր հանքավայրերի շահագործումը
- 4) շահագործվող հանքավայրերում պոչամբարների ստեղծումը

**54 Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Արգելոցը ցամաքի կամ ջրային տարածքի տեղամաս է, որտեղ պահպանվում են բնական միջավայրի կամ կենդանի օրգանիզմների մեկ կամ մի քանի տեսակներ:
- 2) Շրջակա միջավայրի մոնիթորինգը բնական միջավայրի վիճակի և դրա մարդածին փոփոխությունների դիտարկումն է, գնահատումն ու վերահսկումն է:
- 3) Անտառապատ տարածքների կրճատման հետևանք է թթվային անձրևների առաջացումը:
- 4) Կոնսումենտները սննդառության շղթայի այն օղակն են, որոնք անօրգանական նյութերից սինթեզում են օրգանական նյութեր:

**55 Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Զարգացող երկրների մեծ մասի տնտեսության մեջ գերակշռողը ծառայությունների ոլորտն է:
- 2) Սովյալների և թերսնվողների գոտին ձգվում է առավելապես հյուսիսային կիսագնդի բարեխառն լայնություններում:
- 3) Մարդկային զարգացման համաթվի գլխավոր բաղադրիչներն են երկարակեցությունը, կրթվածությունը և կենսամակարդակը:
- 4) Պարենային հիմնախնդիրը բնորոշ է մեծամասամբ զարգացած երկրներին:

56

**Գրել այն ապարների համարները, որոնք ունեն հրային ծագում.**

- |              |             |
|--------------|-------------|
| 1) գրանիտ    | 5) օբսիդիան |
| 2) բազալտ    | 6) կավիճ    |
| 3) կերակրիաղ | 7) տուֆ     |
| 4) կվարց     | 8) գնեյս    |

57

**Տրված են աշխարհի նշանավոր գետեր: Գրել անձրևային սնում ունեցող գետերի համարները.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Մեկոնգ   | 5) Կոնգո     |
| 2) Մակենզի  | 6) Կոլումբիա |
| 3) Օրինոկո  | 7) Օբ        |
| 4) Սիրդարյա | 8) Պարանա    |

58

**Տրված են ծովային հոսանքներ: Գրել Ատլանտյան օվկիանոսի ծովային հոսանքների համարները.**

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Այասկայի  | 5) Սոմալիի   |
| 2) Գվինեական | 6) Բենգելյան |
| 3) Գվիանական | 7) Գոլֆստրիմ |
| 4) Կուրո Սիո | 8) Մոզամբիկի |

59

**Գրել այն լեզվախմբերի համարները, որոնք չեն մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ.**

- |               |                |
|---------------|----------------|
| 1) սեմական    | 5) գերմանական  |
| 2) հայկական   | 6) թյուրքական  |
| 3) սլավոնական | 7) քարթվելական |
| 4) ռոմանական  | 8) իրանական    |

60

**Գրել այն երկրների համարները, որոնք մերձծովային են.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Մոնղոլիա | 5) Մոլդովա   |
| 2) Բոլիվիա  | 6) Հունգարիա |
| 3) Ալժիր    | 7) Շվեդիա    |
| 4) Բելգիա   | 8) Շվեյցարիա |

61

**Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային չեն.**

- |             |             |
|-------------|-------------|
| 1) Շամբի    | 5) Արզնիի   |
| 2) Սևանի    | 6) Մեծամորի |
| 3) Վանաձորի | 7) Ջորագետի |
| 4) Քանաքեռի | 8) Տաթևի    |

62

Հայկական լեռնաշխարհի տրված գետերի համարները դասավորել դրանց հոսքի ուղղության արևմուտքից արևելք, հյուսիսից հարավ, հարավից հյուսիս հաջորդականությամբ.

1. Արաքս

2. Ախուրյան

3. Ճորոխ

63

Տրված են տարբեր բացարձակ բարձրություն ունեցող հարթավայրեր: Դասավորել բարձրության նվազման կարգով.

1. ցածրավայր

2. բարձրավայր

3. դաշտավայր

4. սարահարթ

64

Ինչքա՞ն էլեկտրաէներգիա կարելի է ստանալ 3 տ նավթի այրումից (ջերմային գործակիցը՝ 1,5):

65

Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ օդի ջերմաստիճանը՝ +25°C: Լեռան գագաթին օդի ջերմաստիճանը +10°C է (հաշվարկը կատարել 5°C-ով). Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան գագաթին:

66 Պետության բնակչության թիվը 1 մլն է: Մեկ տարվա ընթացքում ծնվածների թիվը 25 000 մարդ է, իսկ մահացածների թիվը՝ 10 000 մարդ: Որոշել բնակչության բնական աճի գործակիցը (%):

67 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հվ. լ. 38°, արլ. ե. 147°: Որոշել տվյալ վայրի ժամային գոտին:

68 Երկրի նավթի պաշարները կազմում են 6,8 մլրդ տ, տարեկան հանույթը՝ 170 մլն տ: Որքա՞ն է ռեսուրսապահովվածությունը:



69

**Ճապոնիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Բեռնաշրջանառության մեջ մեծ է գետային տրանսպորտի բաժինը:
- 2) Արտահանման մեջ գերակշռում են մեքենաներն ու սարքավորումները:
- 3) Տնտեսության զարգացման մակարդակով առաջինն է Արևելյան Ասիայում:
- 4) Թույլ է ապահովված հումքի և վառելիքի սեփական պաշարներով:
- 5) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
- 6) Ավտոճանապարհային ցանցի համար բնորոշ են արագընթաց լայնահուն մայրուղիները:

70

**ՀՀ անասնապահության վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.**

- 1) Անասնապահության համախառն արտադրանքի մեծ մասը բաժին է ընկնում մանր եղջերավոր անասնապահությանը:
- 2) Խոզաբուծությունն առավել զարգացած է Գեղարքունիքի և Շիրակի մարզերում:
- 3) Թռչնաբուծական ֆաբրիկաներն առավելապես տեղաբաշխված են խոշոր քաղաքների կամ արդյունաբերական կենտրոնների մոտակայքում:
- 4) Ոչխարաբուծությունն առավել զարգացած է նախալեռնային և լեռնային շրջաններում:
- 5) Արոտավայրերի գերբեռնվածությունը և գերարածեցումը բնապահպանական հիմնախնդիրներ են առաջացնում:
- 6) Խոշոր եղջերավոր անասնաբուծությունը մյուս ճյուղերի համեմատ խիստ անհամաչափ է տեղաբաշխված: